

ՍՈՒՐԲ ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՑ
ԹՈՐՈՆԹՕ-ԳԱՆԱՏԱ
1975ի
ՏԱՐԵԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ

ARMENIAN APOSTOLIC
HOLY TRINITY CHURCH
TORONTO, CANADA
1975 ANNUAL REPORTS

1890
1891
1892
1893
1894
1895
1896
1897
1898
1899
1900

1901
1902
1903
1904
1905
1906
1907
1908
1909
1910
1911
1912
1913
1914
1915
1916
1917
1918
1919
1920
1921
1922
1923
1924
1925
1926
1927
1928
1929
1930
1931
1932
1933
1934
1935
1936
1937
1938
1939
1940
1941
1942
1943
1944
1945
1946
1947
1948
1949
1950
1951
1952
1953
1954
1955
1956
1957
1958
1959
1960
1961
1962
1963
1964
1965
1966
1967
1968
1969
1970
1971
1972
1973
1974
1975
1976
1977
1978
1979
1980
1981
1982
1983
1984
1985
1986
1987
1988
1989
1990
1991
1992
1993
1994
1995
1996
1997
1998
1999
2000
2001
2002
2003
2004
2005
2006
2007
2008
2009
2010
2011
2012
2013
2014
2015
2016
2017
2018
2019
2020
2021
2022
2023
2024
2025
2026
2027
2028
2029
2030
2031
2032
2033
2034
2035
2036
2037
2038
2039
2040
2041
2042
2043
2044
2045
2046
2047
2048
2049
2050
2051
2052
2053
2054
2055
2056
2057
2058
2059
2060
2061
2062
2063
2064
2065
2066
2067
2068
2069
2070
2071
2072
2073
2074
2075
2076
2077
2078
2079
2080
2081
2082
2083
2084
2085
2086
2087
2088
2089
2090
2091
2092
2093
2094
2095
2096
2097
2098
2099
2100

2101
2102
2103
2104
2105
2106
2107
2108
2109
2110
2111
2112
2113
2114
2115
2116
2117
2118
2119
2120
2121
2122
2123
2124
2125
2126
2127
2128
2129
2130
2131
2132
2133
2134
2135
2136
2137
2138
2139
2140
2141
2142
2143
2144
2145
2146
2147
2148
2149
2150
2151
2152
2153
2154
2155
2156
2157
2158
2159
2160
2161
2162
2163
2164
2165
2166
2167
2168
2169
2170
2171
2172
2173
2174
2175
2176
2177
2178
2179
2180
2181
2182
2183
2184
2185
2186
2187
2188
2189
2190
2191
2192
2193
2194
2195
2196
2197
2198
2199
2200

2201
2202
2203
2204
2205
2206
2207
2208
2209
2210
2211
2212
2213
2214
2215
2216
2217
2218
2219
2220
2221
2222
2223
2224
2225
2226
2227
2228
2229
2230
2231
2232
2233
2234
2235
2236
2237
2238
2239
2240
2241
2242
2243
2244
2245
2246
2247
2248
2249
2250
2251
2252
2253
2254
2255
2256
2257
2258
2259
2260
2261
2262
2263
2264
2265
2266
2267
2268
2269
2270
2271
2272
2273
2274
2275
2276
2277
2278
2279
2280
2281
2282
2283
2284
2285
2286
2287
2288
2289
2290
2291
2292
2293
2294
2295
2296
2297
2298
2299
2300

2301
2302
2303
2304
2305
2306
2307
2308
2309
2310
2311
2312
2313
2314
2315
2316
2317
2318
2319
2320
2321
2322
2323
2324
2325
2326
2327
2328
2329
2330
2331
2332
2333
2334
2335
2336
2337
2338
2339
2340
2341
2342
2343
2344
2345
2346
2347
2348
2349
2350
2351
2352
2353
2354
2355
2356
2357
2358
2359
2360
2361
2362
2363
2364
2365
2366
2367
2368
2369
2370
2371
2372
2373
2374
2375
2376
2377
2378
2379
2380
2381
2382
2383
2384
2385
2386
2387
2388
2389
2390
2391
2392
2393
2394
2395
2396
2397
2398
2399
2400

2401
2402
2403
2404
2405
2406
2407
2408
2409
2410
2411
2412
2413
2414
2415
2416
2417
2418
2419
2420
2421
2422
2423
2424
2425
2426
2427
2428
2429
2430
2431
2432
2433
2434
2435
2436
2437
2438
2439
2440
2441
2442
2443
2444
2445
2446
2447
2448
2449
2450
2451
2452
2453
2454
2455
2456
2457
2458
2459
2460
2461
2462
2463
2464
2465
2466
2467
2468
2469
2470
2471
2472
2473
2474
2475
2476
2477
2478
2479
2480
2481
2482
2483
2484
2485
2486
2487
2488
2489
2490
2491
2492
2493
2494
2495
2496
2497
2498
2499
2500

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ՏԱՐԵԿԱՆ ԺՄԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Կիրակի 26 Յունուար 1975

Թորոնթո

Սուրբ Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ տարեկան ծխական ընդհ. ժողովը գումարուեցաւ 26 Յունուար 1975, Կիրակի Կ.Ն. ժամը 4.00ին Եկեղեցւոյ սրահին մէջ:

2. Ժողովին բացումը կատարեց Հոգ2. Տ. Ժիրայր Վրդ. Թաշմեան աւուր պաշտամի աղոթքով:

3. Ստուգելէ վերջ, ժողովիս մասնակցող տրատու անդամներուն թիւը. Պատ. ծխական խորհուրդի ատենապետ Տիար Պարգեւ Խոնամեան, ըստ Հայց. Եկեղեցւոյ Ամերիկայի Արեւելեան Թեմի կանոնադրութեան թիւ 17 յօդուածին, օրուան ժողովը օրինաւոր յայտարարեց. ներկաներուն թիւն էր այդ 67 —վաթսուն եօթը—.

4. Պատուարժան ծխական խորհուրդի Ատենապետին հրաւերով ձերնար — կուեցաւ օրուան դիւանի ընտրութեան: Դիւանը կազմուեցաւ հետեւեալ ձեւով Ատենապետ Պր. Կարօ Խապայեան, Ատենաղպիր Պր. Սարգիս Տէքըրմէնճեան

5. Դիւանի ընտրութենէն անմիջապէս վերջ, Հոգ2. հայր Սուրբը, հոգւոց արտասանեց հանգուցեալ ծխական խորհուրդի անդամներ Յակոբ Պէրեմիլեանի եւ Սելիք Զարմայր Խանանեանի հոգիներուն համար. Օրուան դիւանին անունով իօսը առնելով Պր. Կ. Խապայեան շնորհակալութիւն յայտնեց ծխ. ընդհ. ժողովի անդամներուն դիւանին հանդէպ իրենց ունեցած վստահու — թեան համար, ապա հրաւիրեց ժողովականները կրկնութիւններէ խուսափիլ եւ մանաւանդ ջանալ նիւթէն շեղելու որպէսզի կարելի ըլլայ արդիւնաւէտ ժողով մը գումարել:

6. Կարդացուեցաւ նախորդ տարուան ծխական ընդհ. ժողովին ատենա — գրութիւթը. Պր. Հ. Սուին առաջարկեց որ վաւերացուի. առաջարկը երկրորդութիւն վերջ վաւերացուեցաւ:

7. Տիար Կ. Խապայեան հրաւիրեց Հոգ2. Ժիրայր Վրդ. Թաշմեանը որպէսզի կարդայ իր գեկոյցը: Հոգ2. Հայր Սուրբը, յանուն Ամերիկայի Հայոց Առաջնորդութեան Արեւելեան Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Թորգոմ Ս. Աբեպիսկոպոս Մանուկեանի, ողջունեց ծխական ընդհ. ժողովը եւ յաջողութիւն մաղթեց անոր իր աշխատանքներուն մէջ: Հակիրճ կերպով անդրադառնալով ամբողջ տարուայ մը զանազան գործունէութեանց, Հոգ2. Հայր Սուրբը իր խորին շնորհակալութիւնները յայտնեց Եկեղեցւոյս յարակից մարմիններուն իրենց իկատար ածած աշխատանքներուն համար:

Մնայուն քարտուղարի մը կարեւոր հարցին անդրադառնալով Հոգ2. Հայր Սուրբը ըսաւ թէ 'Մնայուն վարիչ քարտուղար մը ունենալը կենսական դարցած է այլեւս եւ թէ նման պաշտօնեայ մը իր բարերար դերը պիտի ունենայ լաւագոյնս կազմակերպելով համայնքիս ծխական խորհուրդին աշխատանքները: Կերջացնելէ առաջ Հոգ2. Հայր Սուրբը շնորհակալութիւն յայտնեց Ս. Երր. Հայց. Եկեղեցւոյ դպրաց գոյգ դասերուն ինչպէս նաեւ փոքրիկներու դպրաց դասի անդամ անդամուհիներուն, որոնք, կանոնաւորաբար եւ նուիրումով ամէն կիրակի եկեղեցի կը յամախէն իրենց երգեցողութեամբ պայծառացնելու Ս. Պատարագը, գոյգ ղեկավարներու առաջնորդութեամբ:

Մտորակալութիւն յայտնեց նաեւ Պատ. ծխական Խորհուրդին հետագող անդամներուն եւ յաջողութիւն մաղթեց անոնց որոնք պաշտօնի պիտի ընտրուէին նոյն օրը:

Հոգշ. Հայր Սուրբին զեկոյցէն վերջ, Տիար Յակոբ Եզրանոսեան կարդաց տեղեկագիրը այն յանձնախումբին որ ընտրուած էր 1974ի ծխական ընդհ. ժողովին կողմէ, գաղութիս հետաքրքրող երկու հարցերու կարգադրութեան համար: Պրն. Յ. Եզրանոսեան ըսաւ թէ յանձնախումբը իրեն վստահուած պաշտօնը լաւագոյնս կատարած է, եւ թէ ներկայիս, համաձայնութիւն գոյացած ըլլալով, ոչ մէկ անհասկացողութիւն գոյութիւն ունի երկու երգչախումբերու միջեւ եւ թէ ներկայիս Ա. Երրորդութիւն Հայց. Եկեղեցին, շնորհիւ այդ համաձայնութեան ունի մէկ դպրաց դաս ԿՈՄԻՏԱՍԵԱՆ դպրաց խումբով եւ ԵԿՄԱԼԵԱՆ դպրաց խումբով:

Պատասխանելով եղած հարցումը, Պրն. Եզրանոսեան ըսաւ թէ, յանձնախումբին վստահուած երկրորդ հաղցին մասին — Արթօ Գաւուրի հրաժարման հարցը — տակաւին բան կարելի չէր եղած ընել:

8. Ծխական Խորհուրդի տեղեկագրին ակնարկելով, Պրն. Վ. Վարդանեան քննադատեց այն պարագան թէ ծխական Խորհուրդի տեղեկագրին մէջ ոչ իսկ մէկ անգամ յիշուած է անուր գաղութիս Հոգեւոր Հովիւին որը ի պաշտօնէ նախագահն է ծխական Խորհուրդին եւ խնդրեց որ յետ այսու, ապագայ ծխական Խորհուրդի անդամներ նկատի առնեն այս պարագան: Ժողովս համաձայն գտնուեցաւ Շարունակելով իր խօսքը եւ ակնարկելով Տիկնանց Յանձնախումբին, Պրն. Վ. Վարդանեան թելադրեց որ Տիկնանց Յանձնախումբը յիշատակէ անւնները բոլոր անոնց որոնք բարոյական օգնութիւններով դիւրացուցած են իրենց աշխատանքները:

9. Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ վարժ. ի տեղեկագրին անցնելով Տիար Յ. Գուլումեան ըսաւ թէ դպրոցի դասաւանդութեանց ընթացքին երկու տարբեր հայերէններ կը գործածուին, Արեւելահայերէն եւ Արեւմտահայերէն: Պր. Գուլումեան ըսաւ թէ լաւ կ'ըլլայ որ միայն Արեւմտահայերէն գործածուի որպէսզի փոքրիկներու մտքերուն մէջ շփոթութիւն կայտառվայ: Տնօրէնուհին, Արեւելահայայիս Տիկ. Գանտահարեան, ինքզինք արդարացուց ըսելով թէ ինքը միայն ուսուչական կազմին հետ գործ ունի եւ ոչ թէ աշակերտներու:

10. Պր. Գրիգոր Էլմասեան, գեախառնի արտայայտութիւններ ունեցաւ ԳՐԱԽԱՆՈՒԹԻ յաջողութեան համար տարուած աշխատանքներուն մասին:

11. Ժողովս վաւերացուց նաեւ 1975 նիւթական պիւտճէն:

12. Ընտրութիւնները տեղի ունեցան գաղտնի քուէարկութեամբ եւ արդիւնքները եղան հետեւեալ ձեւով: Ծխական Խորհուրդի անդամ ընտրուեցան 1975-76ի համար:

Տիարք.	Երուանդ Չուլմեան	107	Չայներով
	Թորգոմ Զատունեան	79	,,
	Սուշեղ Շահնագար	77	,,
	Մարտիկ Հէքիմեան	73	,,
	Միսակ Գոմեախեան	66	,,
Ընտրողական յանձնախումբի անդամ ընտրուեցան:—			
Տիարք.	Ժիրայր Բէտէրեան	81	Չայներով
	Յակոբ Եզրանոսեան	72	,,
	Մարտիկ Փփազեան	71	,,
	Էմմոն Արթին	70	,,
	Վահէ Թընկըր	57	,,

Հաշուէքննիչ մարմնի անդամ ընտրուեցան.—

Տիարք. Լեւոն Եագճեան, Արամ Չուլմեան, Արմենակ Մարգարեան:

ՆՈՐ ՀԱՐՑԵՐ:

— Պրն. Մարտիկ Փփազեան, առաջարկեց որ Հայաստանի Խորհրդացման տարեդարձը նոյ. 29ը պաշտօնապէս տօնուի եկեղեցիին կողմէ:

Պրն. Կարօ Գավուբեան խօսք առնելով ըսաւ թէ նոյ. 29ը տօնելուն մէջ ոչ մէկ անպատեհութիւն կը տեսնէ, Սակայն աւելցուց ան, նոյ. 29ը ըլլաով քաղաքական տօն մը, քաղաքական կուսակցութիւնները պարտին տօնել այդ, եւ ոչ թէ եկեղեցին: Գաղութիս միակ եկեղեցին պետք է դուրս մնայ քաղաքական տօնակատարութիւններէ ըսաւ ան:

Փոթորկալից վիճաբանութիւններէ եւ թէր ու դէմ կարծիքներու փոխա - նակութիւններէ վերջ, քուէարկութեամբ որոշուեցաւ որ եկեղեցին դուրս մնայ քաղաքական տօնակատարութիւններէ:

— Պրն. Կ. Վարդանեան առաջարկեց որ պատգամաւորական ժողովի զացող պատգամաւորներուն ծախսերուն մէկ մասը հոգացուի ծխական խորհուրդին կողմէ, օրինակ օդանաւային երթուղարձի ծախսերը, որովհետեւ ըսաւ ան, շատ յաճախ, արժանի անձերը չէ որ կ'երթան այդ պատգամաւորական ժողովներուն նիւթական դժուարութեանց չմտնելու համար ինքզինքնին: Ծխական խորհուրդի Ատենապետ Պրն. Գ. Խոճաճեան բռնուն կերպով ընդդիմացաւ եղած առաջարկին, ըսելով թէ եկեղեցւոյս զանազան մարմիններու մէջ աշխատողները պետք է որ ձրիաբար աշխատանք տանին, որովհետեւ ըսաւ ան, եկեղեցիս անշարժ կալուածներ չ'ունի եկամուտ ապահովելու համար, եւ թէ այդ ծախսերն ալ վերջի վերջոյ հոգացուին ժողովուրդին կողմէ: այս հարցն ալ բաւական ձեռուելէ վերջ անցաւ քուէարկութեան եւ որոշուեցաւ այդ պատգամաւորական ծախսերը նոյնիսկ մասամբ չ'հոգալ:

— Հարց որուեցաւ ծխական խորհուրդին թէ որքան ճիշտ են, Հայր Սուրբին գաղութէս տեղափոխուելուն մասին եղած շշուկները: Պատ. ծխ. խորհուրդի Ատենապետ Պրն. Գ. Խոճաճեան ըսաւ թէ ինքն ալ շատ շատերու պէս լսած է այդ շշուկները եւ թէ ծխական խորհուրդը որեւէ նամակ չէ ստացած այդ մասին: Պր. Խոճաճեան աւելցուց նայել թէ ըստ Սահմանադրութեան թիւ 41 Յօդուածին, Սրբազան Հայրը թէմական խորհուրդը իրաւունք ու զօրութիւնը ունի կղերա - կան մը իր պաշտօնէն հեռացնելու կամ տեղափոխելու եթէ այդպէս յարմար նկատէ: Պրն. Վարդանեան ըսաւ թէ լաւ կ'ըլլայ որ օրուան դիւանը, ծխական ընդհ. ժողովին անունով նամակ մը գրէ Սրբազան հօր, ժողովիս ցաւն ու զարմանքը յայտնելու: նման քայլի մը համար որ Սրբազան հայրը առած է առանց ծխական ժողովիս կարծիքը առնելու: ն կատի առնելով որ միակ անձը որ հեռաձայնային այդ խօսակցութիւնը ունեցած էր Սրբազան Հօր հետ Հայր Սուրբը ինքն էր, խնդրուեցաւ Հայր Սուրբէն որ այդ մասին լուսաբանէ ժողովը եթէ կ'ուզէ այդպէս ընել:

Հայր Սուրբը, հակիրճ կերպով ըսաւ թէ ինչ է եղելութիւնը. ըսաւ նաեւ թէ ինք ընաւ համաձայն չէ Սրբազան Հօր կողմէ առնուած այն որոշումին, ըստ որուն, ինքը կը նշանակուէր Հոգեւոր հովիւ Սէնթ Քէթրինզի հայկական գաղութին: Հոգ. Հայր Սուրբի ըսաւ նաեւ թէ ինք, այդ առնչութեամբ նամակ գրած է Ամենայն Հայոց Կաթողիկոս Ս. Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսին եւ թէ կը սպասէ Վեհափառ Հօր որոշումին: Խօսք առնելով, Պրն. Կ. Գավուբեան, յիշեցնելէ վերջ սահմանադրութեան թիւ 41 յօդուածը, ըսաւ թէ կանուխ է այս մասին վիճելու կամ որեւէ քայլ առնելու համար:

Ծխական ընդհ. ժողովս եկաւ այն եզրակացութեան թէ պէտք է սպասել պաշտօնական նամակի մը ստացուելուն ծխ. խորհուրդիս կողմէ: Ծխական խորհուրդը նամակ ստանալու պարագային եւ եթէ կարելիութիւնը ունենայ, ծխական ընդհ. ժողովս ժողովի հրաւիրէ այս հարցին քննարկութեան համար:

— Պրն. Յ. Երրանոսեան առաջարկեց, որ ծխ. ընդհ. ժողովիս անունով, օրուան դիւանը լաւագոյն մաղթանքներու նամակ մը գրէ եւ դրկէ Տիկ. Փ. Պապայեանին առողջական պատճառներով ընդհ. ժողովէն բացակայելուն համար:

Ժողովս համաձայն գտնուելով, օրուան դիւանը նամակ մը խմբագրեց եւ դրկեց Տիկ. Փ. Պապայեանին, Պրն. Էտի Էօտէմիշլեանի միջոցաւ:

— Պրն. Սեդրակ Ատուրեան, առաջարկեց որ տարին 2 անգամ ծխական Ընդհ. ժողով գումարուի որպէսզի ժողովները աւելի կարճ տեւեն:

Պրն. Գ. Էլմասեան ըսաւ թէ նոյնը փորձուած է անցեալին եւ ձախողած, թայց
աւելցուց ան, այդ պատճառ պետք է ըլլայ որ նորընտիր ծխական խորհուրդը
չխորհի այդ մասին:

Ժամանակի յառաջացման պատճառաւ, օրուան դիւանի անունով, Ատենապետ
Կարօ Խապայեան, ներկաներուն ուղղեց իր շնորհակալական խօսքերը անոնց
ցոյց տուած լրջախոհութեան եւ կարգապահութեան համար, ապա հրաւիրեց Հոգ2.
Հայր Սուրբը փակման ու տէրունական աղօթքի յոտնկայս երգեցողութեան.

Ժողովը փակուեցաւ ժամը 10.45 ին.

ի դիմաց

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՑ
ՏԱՐԵԿԱՆ ԺԽԱԿԱՆ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ ԴԻԱՆԻՆ

ԱՏԵՆԱԴՊԻՐ

ԱՏԵՆԱԴՅՏ

Սարգիս Տէրըրմէնճեան

Կարօ Խապայեան

Ժխական խորհուրդի Ատենապետ Տիար Արմեն Կիւրքճեան, տրատու անդամ — ներուկ թիւր — 58 — մեծամասնութիւն նկատելով ժողովը օրինաւոր գտաւ եւ նիստը բացաւ, 9.05—ին Եկեղեցւոյ սրահին մէջ, նախագահութեամբ Գերշ. Տ. Արիս Եպս. Շիրվանեանի:

Ժողովին բացումէն վերջ, Ատենապետին հրաւերով, Արքայան Հայրը աղօթեց: Ատենապետին առջարկով, ժողովականները յոտընկայս լուծիւն պահեցին ի յիշատակ մեր Բիւրաւոր նահապետներուն:

Կարդացուեցաւ օրուան Օրակարգը: Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ Թեմ հաստատել Գանատայի մէջ:

Ատենապետութեան կողմէ բացատրութիւն տրուեցաւ, թէ ժխական խորհուրդը նկատի առած է. Գանատայի հայ բնակչութեան օրէ—օր աւելանալը, այս հայաշատ գաղութներուն աւելի արդիւնաւոր կազմակերպութեան եւ հոգատարութեան հարցը, անկազմակերպ գաղութներուն կազմակերպութեան պէտքը, Գանատայի մէջ գտնուող Հայց. Առաքելական Եկեղեցիներուն Առաջնորդարանը փոխանակ Նիւ Եորքի մէջ ըլլալուն, Գանատայի մէջ ըլլալուն աւելի յարմարութիւնը, Նիւ Եորքի Առաջնորդարանին լիազօրութեան տակ մեր 50 ծուխերը ըլլալուն պատճառաւ պէտք եղած չափով հոգատարութիւն չէ տրուեր Գանատական ծուխերուն:

Բացատրութիւն տրուեցաւ, թէ Սէնթ Գաթրինգի եւ Սոնթրէալի ժխական խորհուրդներն ալ, այս ուղղութեամբ առաջին աշխատանքներ տարած էին: Թեմական խորհուրդի 1974 տարուան աշնան որոշումին վրայ, որուն համաձայն Գանատայի մէջ Թեմ կազմելու համար նախնական աշխատանքներու լիազօրութիւն կը տրուէր յանձնախումբի մը, այս յանձնախումբի պարտականութիւնը կատարուած կը ըլլայ Գանատական ծուխերու 3 ժխական խորհուրդներու կողմէ:

Առաջնորդական փոխանորդի հրաւերով շրջանային ժողովի հրաւիրուած էին Սոնթրէալի Թորոնթոյի եւ Սէնթ Գաթրինգի ժխ. խորհուրդները 12 Ապրիլ 1975 Թորոնթոյի Ս. Երր. Եկեղեցւոյ մէջ: Սոնթրէալի ժխ. խորհուրդի անդամները անձնական պատճառներով չէին կրցած գալ եւ Սէնթ Գաթրինգի ծուխը 7 ներկայացուցիչներով ներկայ էին:

20 Ապրիլ, 1975, Կիրակի օր Առաջնորդական Գոխանորդի նախագահութեամբ, Սոնթրէալի մէջ երկրորդ շրջանային ժողով մը գումարուած էր, որուն ընթացքին 3 ծուխերն ալ ներկայացած էին եւ 3 ծուխերն ալ համաձայնած էին նոր Թեմ մը հաստատելու Գանատայի մէջ. որոշուած էր, եւ պատրաստուած էր դիմում մը, յղելու համար Թեմական ժողովին: Ի անձեռուած դիմումագիրը կարդացուեցաւ ժողովին:

Առաջ. Գոխանորդ Արքայան Հայրը. Վեհ. Հայրապետի Գանատայի մէջ ամենամօտիկ ապագայի մէջ Թեմ կազմելու մասին, 11 Սարտ, 1975 թուակիր նամակը ժողովին կարդաց եւ հետեւեալ բացատրութիւնները տուաւ: Գանատահայ գաղութին մէջ Թեմ կազմելու գաղափարը Վաչէ Արքայանին Առաջ. Գոխանորդութեան ի յայտ եկած էր: Այն ատեն Վեհ. Հայրապետը Վաչէ Արքայանին խնդրանքին չէր ընդառաջած: Այս օր խնդիրը աւելի հասունեցած ըլլալով կը փափաքէր որ ծուխերը միաձայն փափաք յայտնեն եւ օրինական ընթացքով որոշումի հասնին: որպէսզի ժխ. խորհուրդները լիազօրութիւն ունենան այս ուղղութեամբ աշխատելու:

Առաջ. Գոխանորդը հրահանգած էր 3 ժխական խորհուրդներուն արպեսզի մասնաւոր ժխ. Ընդհ. ժողովներ գումարէին 3 ծուխերու մէջ եւ Եկեղեցւոյ տրատու անդամները իրենց հաւանութիւնը տային: Սէնթ Գաթրինգի մէջ արդէն, ընդհ. ժողով գումարած էր եւ անդամները միաձայնութեամբ իրենց համաձայնութիւնը յայտնած էին: Տիար Ս. Գոմէտիսեան առաջարկեց, որ Գանատայի մէջ Հայց. Առաք. Եկեղեցւոյ Թեմ հաստատուի եւ Վեհ. Հայրապետէն խնդրուի, որ այս իր սրբարար կոնդակով վավերացնէ: Առաջարկը երկրորդութեամբ եւ գաղափարի փոխանակութիւններ սկսան:

Տիար Վարդան Վարդանեան.— Եթէ՞ Թեմական ժողովը այս առաջարկը մերժէ, ինչ՞ պիտի ըլլայ:

Պատասխան.— Վեհ. Հայրապետը պատրաստ է կոնդակով մը նոր Խեմ հաստատելու:

Տիար Հրանդ Սուլին.— Այս դիմումը յայտարարութեան ձեւով պիտի ըլլայ, թէ ոչ առաջարկ:

Պատասխան.— Ասիկա յայտարարութեան ձեւով պիտի ըլլայ, որով քուէարկութեան հարց պէտք չէ ըլլայ:

Տիար Կարօ Գավուբեան.— Վեհափառը կը նախընտրէ օրինական ճամբաները, եւ ոչ թէ կոնդակով մը հաստատել եւ ստիպել:

Տիար Հայկ Սէլեան.— Այս առաջարկը այս ժողովին մէջ ինչպէս պիտի քուէարկուի հասարակ մեծամասնութեամբ, կամ թէ յօդուած 17, — Ա — համաձայն երկու երրորդ

մեծամասնութեամբ: Ասիկա կարելիոր հարց մըն է եւ ամբողջ Գանատան կը հետաքրքրէ. կը թելադրեմ, որ ներկաներուն երկու երրորդին քուէներով որոշուի:

Տիար Կարօ Գավուբեան.— Սասնաւոր ծխ, Ընդհ. ժողովի հրաւերի շրջաբերականին վրայ կոչի ուղղարկման թուական չէ տրուած, ասիկա շատ կարելի է, ուրեմն լաւ պիտի ըլլայ, որ ճշտուի որպէսզի ապագային որեւէ թիւրիմացութեան պատճառ չըլլայ:

Պատասխան.— Կոչը ուղարկուած է 14 Ապրիլ, 1975 թուականին.

Ներկաներուն բացատրութենէն յայտնի եղաւ, թէ ներկաներուն մեծամասնութիւնը 16 Ապրիլ 1975ին եւ մնացեալն ալ յաջորդ քանի մը օրերուն այս կոչը ստացած են:

Տիար Ժիրայր Բէտէրեան.— Թեմի հաստատուելուն մասին աւելի բացատրութիւն ինչորեք եւ աւելցուց, թէ Խեմ մը կազմուելէ վերջ արդեօք տակաւին տուրքը նիւ Եորք պիտի դրկուէր.

Պատասխան.— Եթէ Գանատայի մէջ թեմ կազմուի, տուրքերը Գանատայի Առաջնորդութեան պիտի վճարուի: Այսօր Թորոնթօն կը վճարէ 6000 տուար, Սէնթ Գաթրինզ 2000 եւ Մոնթրէալ 5000 տուար նիւ Եորքին:

Տիար Հայկ Սելեան.— Հասկնալ ուզեց թէ թեմը երբ՞ պիտի հաստատուի անմիջապէս պատգամաւորական ժողովէն վերջ, թէ ոչ աւելի վերջ թուականի մը:

Պատասխան.— Եթէ Յ ծուկերը, ծխական խորհուրդներու լիազօրութեան տակ եւ պատգամաւորական ժողովին այս հարցը ընդունուի, այդ թուականէն սկսեալ 6 ամսուան աշխատութեան շրջան մը կը նախատեսուի:

Տիար Էլմասեան.— Ըսաւ թէ անձնապէս Առաջնորդարանի հաստատման հակառակ չէ, սակայն իր մտահոգութիւնը յայտնեց եկեղեցիիս առանց մնայուն հովիւի մնալուն հաւանականութիւնը պարզելով եւ աւելցուց, թէ Հայր Ժիրայր Վրդ. Խաչմեանը տակաւին հոս էր եւ կարելի էր իրմէ օգտուիլ:

Պատասխան.— Սրբազան Հայրը, որպէս հոգեւոր հովիւ, գաղութս մինակ պիտի չի ձգէ:

Սրբազան.— Որպէս Վոխանորդ եւ հովիւ թէեւ ինծի համար դժուար է, թէ կրթական, մշակութային եւ կրօնական հարցերու հասնել, սակայն կը վստահեցնեմ, թէ հովուական պաշտօնը պիտի կատարեմ, երբեմն թերեւց ումենը կրնան պատահիլ, բայց իմ կարողութեամբս դէպքերուն նախապատուութիւն պիտի տամ, կը յուսանք թէ հոգեւորական մը կը գտնուի առաջնորդարանի հիմնարկութեան պարագային եւ Թորոնթօն իր հոգեւոր հովիւը ունենայ այն առեւ:

Տ իար էլմասեան.— Ինծի համար ծիսակատարութիւնները եւ պատարագները բաւարար չէն իմ մտահոգութիւնս այն է, թէ 10 տարի առաջուան վիճակին չի մատնուինք

Տիար Թօզմանեան.— ծիսական Խորհուրդը, Գանատայի մէջ գատ Առաջնորդարան մը հիմնելու պարագային, նախատեսուած հարցերուն մասին խորհած է:

Պատասխան.— Շրջանային ժողովներուն ընթացքին, այս մասին խօսած է, սկզբի համար նախատեսուած ծախսերը 14000—15000 տոլար են: Սրբազանը առաջնորդարանի համար քարտուղար մը չուզեր առայժմ:

Տիար Հրանդ Սուրին.— Առաջնորդարանի պիտո՞ւն միայն տուրքերով չի հայթայթուիր, իր ծախսերը հոգալու համար զանազան հասույթաբեր ձեռնարկներու կը կը դիմէ:

Տիար Մ. Գուզուեան.— Առաջնորդարանի կեդրոնը ուր պիտի ըլլայ:

Պատասխան.— Զանիոր տակաւին առաջնորդարան չի կայ, ինչպէս՞ կուզէք որ կեդրոնը յայտնի ըլլայ:

Տիար Ժ. Բէտէրեան.— Եթէ Առաջնորդարանը Թորոնթօ ըլլայ, մենք առանց հոգեւոր հովիւի պիտի մնանք:

Պատասխան.— Օնթարիոյ նահանգին մէջ կազմակերպելիք նոր գաղութներ կան որով Թորոնթօ աշխարհագրական տեսակետով կեդրոն տեղ ենք:

Տիար Հայկ Սէլեան.— Վաչէ Սրբազանին ժամանակ Աջաջ. Գոխանորդութեան կեդրոնը Թորոնթօ եղած էր, վերջը Սոնթրէալի մէջ աւելի հայուիւն ըլլաւը նկատի առնելով, Գոխանորդութիւնը Սոնթրէալցիներու ճնշումով Սոնթրէալ փոխադրուած էր, յառաջիկային ասիկա նորէն չի պատահի:

Պատասխան.— Առաջնորդութիւնը Թորոնթօյի մէջ պահելու համար 2րդ եկեղեցի մը բանալը լաւ միջոց մըն է: Թեմական պատգամաւորներու ժողովը կը ճշտէ կեդրոնը:

Տիար Ժ. Բէտէրեան.— Անցեալին եւ ներկային մէջ մեծ տարբերութիւն կայ, մեր պատգամաւորներուն կ'իյնայ ասիկա ճշտել եւ հաստատել:

Տիար Պասմանեան.— Եթէ մենք Առաջնորդարան մը պիտի ունենանք ինչ առաւելութիւններ պիտի ունենանք:

Պատասխան.— Ազնապետ Տիար Զիւրքմեան, թեմական Խորհուրդին տրուելիք դիմումնագիրը դարձեալ կարդաց:

Տիար Ա. Գավուբեան.— Առաջնորդարանի հիմնարկութեան ի նպաստ արտայայտուելով հետեւեալ կետերը մատնանշեց,—

- Ա — Գանատան Սիացեալ նահանգներէն գատ երկիր մըն է:
- Բ — Գանատահայութիւնը շատցած ըլլալով պէտք է ունենալ հոս Առաջնորդարան մը:
- Գ — Լաւ կըլլայ, որ Գանատայի մէջ հաստատուելիք առաջին առաջնորդարանը էջմիածնական եկեղեցիներու կողմէ հիմնուի:
- Դ — Նկատի ունենալու է, որ այս առաջարկը պէ՛հ. Հայրապետին կողմէ եկած է, եւ իր խորքին մէջ մեծ իմաստ մը ունի:

Տիար Ժիրայր Բէտէրեան նոյն գաղափարին համակարծիք գտնուեցաւ:

Տիար Հրանդ Սուրին.— Գանատայի մէջ երեք ծուխեր ունինք եւ պիտի նոր ծուխեր ունենանք, ուրեմն եկեղեցիներու պէտք ունինք, ապագային ինչ պիտի կ'իջակալի— ըլլայ:

Սրբազան Հայր.— Հայաստանէ մեկնելէ առաջ, քայլ մը առաջ երթալով, հոգեւորականի պէտքը նկատուեցաւ եւ Հայրապետի հետ որոշեցինք, որ 2 կամ 3 ծեմարանէն շրջանաւարտ սարկաւազներ հոս գալով, մեր հսկողութեան տակ իրենց բարձրագոյն ուսումը ստանան, իսկ երէկ այս ուղղութեամբ էջմիածինէն կամակ մը ստացայ: Սրբազան Հայրը 10 Ապրիլի 1975 թուակիր նամակը ժողովին կարդաց:

Տիար Սազարիա.— Նիւ Եորքի Առաջնորդարանին հետ մեր յարաբերութիւնները
ինչպէս պիտի ըլլան:

Սրբազան Հայր.— Երկու քոյր Առաջնորդարաններ պիտի ըլլան, մեր յարաբերու-
թիւնները միշտ լաւ պիտի ըլլան: Վեհ. Հայրապետէն եկող
հրահանգները փոխանակ նիւ Եորք զալու, ուղղակի հոս մեզի
պիտի գան:

Տիար Էլմասեան.— Իր առաջնական խօսակցութեան վերադառնալով, յիշեցուց թէ
առաջնորդարանի հիմնուելուն, ծուխս առանց հովիվի պիտի
մնար եւքանի որ ամէնքս ալ ժիրայր Վրդ. Թաշմեանին
մասին գովեստով խօսէ՛ անք եւ քանի ինքը տակաւին հոս
է, այս ժողովիս մէջ զինքը ծուխիս հվիւ նշանակենք:

Պատասխան.— Այս հարցը օրակարգէ դուրս է:

Սրբազան Հայր.— Առաջնորդարան մը հիմնուելու պարագային, ով՞ առաջնորդ
պիտի ընտրուի, հիմակուընէ տակաւին յայտնի է, կրնայ
ինձմէ գառ որեւէ կղերական մը որպէս առաջնորդ ընտրուիլ:

Ատենապետ Տիար Ա. Քիւրքճեան հարցը քուէարկութեան դրաւ:

Տիար Վ. Վարդանեան ընդմիջումով ըսաւ, թէ քուէարկութեան ձեւը պէտք է
բացարձակ մեծամասնութեամբ ըլլայ:

Պատասխան.— Հարցը քուէարկութեան դրուած է:

Սրբազան.— Կանոնադրութեան 17 յօթուածին Բ համարին համցոյց,
անշարժ կալուածներու գնման եւ վճարման կամ շինութեան
համար է, այսպիսի նիւթի մասին կանոնադրութիւնը
յօթուած մը չունի քուէարկութեան ձեւին մասին որիշում
տալու:

Ատենապետ Տիար Ա. Քիւրքճեանի առաջարկի մասին քաւականաչար քաղաքարի
փոխանակութիւններ ըլլալը նկատի առնելով, առաջարկը դարձեալ քուէի դրաւ:
Այդ ժամանակ 71 տրատու անդամներ ժողովի ներկայ էին:

Զեռամբարձ քուէարկութեան արդիւնք — 59 — անդամներ ի նպաստ
առանձին թեմի հաստատման քուէարկեցին եւ 12 անդամներ ձեռնպահ մնացին,
այսպիսով առաջարկը միաձայնութեամբ ընդունուած նկատուեցաւ:

Ժողովը փակուեցաւ ժամը 10.25 ին Սրբազան Հօր մաղթանքներով եւ
փակման աղօթքով:

ԱՏԵՆԱԴՊԻՐ

Թ. ԶԱՊՈՒՆԵԱՆ

ԱՏԵՆԱՊԵՏ

Ա. ՔԻՒՐՔՃԵԱՆ

Ս. ԵՐՐՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ

ԱՏԵՆԱՊԵՏԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

1975

1975 տարեշրջանը եկեղեցւոյս պատմութեան մէջ փոխանցման շրջան մը մը եղաւ: Վեհանձն եւ նուիրեալ մեր չորս թեկնածուներէն երեքը՝ Տիարը Թորգոմ Զապունեան, Մարտիկ Հէքիմեան եւ Մուշեղ Շահնազար, ծխական խորհուրդի ընտրուեցան նոր հասկացողութեան եւ աշխատութեան նոր թափ մը բերելու յիշու եւ տենչանքով: Տիար Միսակ Գոմետիսեանը գտանք լուրջ եւ պարտականութեան գիտակից անձ մը ըլլալով: 11 փետրուար 1975 թուականին իր առաջին նիստը գումարող ծխական խորհուրդը հետեւեալ ձեւով կազմեց իր վարչութիւնը:

Արմէն Զիւրքճեան	Ատենապետ
Երուանդ Չուլճեան	Փոխ Ատենապետ
Թորգոմ Զապունեան	Ատենադպիր
Մարտիկ Հէքիմեան	Գանձապահ
Մինաս Սէլեան	Փոխ Ատենադպիր
Մուշեղ Շահնազար	Հ.Ն.Ե.Կ.Ա. Ի կցորդ
Պետրոս Գոգորեան	Փոխ Գանձապահ
Եղուարդ Էօտեշիշլեան	Ս.Սահակ եւ Ս.Սեսրոպ Ազգ. վրժի կցորդ
Միսակ Գոմետիսեան	Կալուածներու եւ գոյքերու հոգատար
	Ընկերային ձեռնարկներու կազմակերպիչ
	Շրջաբերականներու պատասխանատու

Ծխական խորհուրդը ունեցաւ 33 հերթական եւ 3 բացառիկ նիստեր, որոնց իրենց մասնակցութիւնը բերին եկեղեցւոյս թեմական պատգամաւորները: Վարչութիւնս առաջին ամսուան ընթացքին, օրուայ հոգեւոր հովիւ Հայր Թիրայր Վրդ. Թաշճեանի, իր պաշտօնին առջնութեամբ Առաջնորդարանէն ստացած հրահանգներուն հանդէպ ընդգրկած հակասական եւ պարափոփոխ դիրքը, ծխական խորհուրդի առօրեայ աշխատութիւնները մեծ մասով վնասեց:

ՀՈԳԵՒՈՐ ՀՈՎԻՒԻ ՎՈՓՈՒՈՒԹԻՒՆ

1975 տարուայ Յունուարի տարեկան ծխական ընդհ. ժողովին ինչպէս մասամբ յայտնի եղած էր, Մարտ ամսուայ մէջ եկեղեցւոյս հոգեւորական դասուն մէջ փոփոխութիւն եղաւ: Ս. Էջմիածին մեկնելու որոշում տուող Հայր Թիրայր Վրդ. Թաշճեանի տեղ Գերշ. Տ. Արիս Ս. Եպս. Շիրվանեան, Առաջնորդ Արքազան հօր եւ թեմական խորհուրդի որոշումով, նշանակուեցաւ եկեղեցւոյս հոգեւոր հովիւ եւ Առաջնորդական Փոխնորդ Գանատայի: Փոփոխութիւնը գաղութիս տեղեկացուեցաւ յատուկ շրջաբերականով: Արքազանը ծանչանք որպէս սակաւախօս խոհեմ, դիւանագէտ եւ պատրաստուած կղերական:

ԳԱՆԱՏԱՅԻ ՄԷՋ ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԵՄ ՀԱՍՏԱՏԵԼ

Վաչէ Արքազանի օրով ծնունդ առած այս գաղափարը դարձեալ արծարծուեցաւ: Այս ուղղութեամբ Ս. Բէթրինգի ծխական խորհուրդին հետ Թորոնթոյի մէջ

12 Ապրիլին, եւ Մոնթրէալի մէջ ալ Մոնթրէալի ծխական խորհուրդին հետ 20 Ապրիլին հանդիպումներ ունեցանք: Թեմական խորհուրդին յղելու համար պատրաստուած բանաձեւը 25 Ապրիլին գումարուած ծխական մասնակի ընդհ. ժողովին ներկայացուեցաւ: Այդ օրուայ տեսնագրութիւնը կցուած է այս տեղեկատուութեան: Բանաձեւը 3 Մայիսին յղուեցաւ թեմական խորհուրդին Գանատայի պատգամաւորներուն եւ Արիս Սրբազանի կողմէ:

Գանատայի երեք եկեղեցիներու ներկայացուցիչներով, 1 Յուլիսին եկեղեցւոյ մէջ գումարուած ժողովին, կազմուեցաւ արժամեայ շրջանային վարչութիւն մը նոր թեմ հիմնելու աշխատութիւնները յառաջացնելու համար:

ԽՈՐՀՐԴԱԿԱՍԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

.....

Հարսանիք	31
Մկրտութիւն	68
Թաղում	22

ԱՅՑԵԼՈՒ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ

.....

Առաջնորդ Թորգոմ Սրբազան, Գերշ. Տ. Արիս Ս. Եպս. Շիրվանեանը գաղութիս ներկայացնելու եւ Գանատայի եկեղեցիներու ներկայացուցիչներու հետ նոր թեմի մասին տեսակցութիւն ունենալու համար, երկու անգամ քաղաքս այցելեց:

Տ. Արիս Ս. Եպս. Շիրվանեանի Առաջնորդական փոխանորդի հանգամանքով կատարած հովուական այցելութիւններու եւ արձակուրդով Ս. Էջմիածին գտնուած միջոց, Ս. Պատարագ մատուցանելու եւ խորհրդակատարութիւններ կատարելու համար Հայր Շնորհք Վրդ. Գասպարեան, Արժ. Տ. Յուսիկ Զին. Նշանեան եւ Արժ. Տ. Պարզեւ Աւգ. Զին. Պարտազօնեան մեր մէջ գտնուեցան:

ՀԱՅՐ ԺԻՐԱՅՐ ՎՐԴ. ԹԱՇՃԵԱՆԻ ՈՂՋԵՐԹԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

.....

Գաղութիս աւելի քան տասներեք տարիներու հոգեւոր հովիւ Հայր Ժիրայր Վրդ. Թաշճեանի ի պատիւ, եկեղեցւոյս սրահին մէջ, 13 Ապրիլ 1975 կիրակի օր ճաշկերոյթ մը սարգեցինք: Իր շրջանի ծխական խորհուրդի Ատենապետները եւ թեմական պատգամաւորները եւ ինչպէս նայել յարանուանութեանց հոգեւոր պետերը հրաւիրեցինք: Մեծ թիւով Թորոնթոյեայ Գերշ. Տ. Պատարագ գտնուեցան: Հայր Սուրբը, յարակից մարմիններու կողմէ ստացաւ յիշատակի նուէրներ, իսկ ծխական խորհուրդի կողմէ ալ ստորագրութեամբ յիշատակի գրութիւն մը եւ ինչպէս նաեւ 1500.00 տոլար:

ԳԵՐՇ. Տ. ԱՐԻՍ Ս. ԵՊՍ. ՇԻՐՎԱՆԵԱՆԻ ԲԱՐԻԳԱԼՈՒՍՏԻ ՃԱՇԿԵՐՈՅԹ

.....

Ի պատիւ Սրբազան Հօր բարիգալուստի ճաշկերոյթ սարգեցինք 25 Մայիս 1975 կիրակի օր եկեղեցւոյս սրահին մէջ, պատուոյ սեղանին վրայ տեղ եւ խօսկ տալով Ռ. Ա. Կ. ի, Հ. Յ. Դ. ի, Հ. Բ. Ը. Ս. ի եւ յարանուանութեանց հոգեւոր պետերուէ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

.....

Նկատեցինք թէ ներկայ ապահովագրութիւնը բաւարար չէր: Աւելի գոհացուցիչ պայմաններ պարզակող ապահովագրութիւն մը գնեցինք եւ յաւելեալ 313 տոլ. վճարեցինք:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՔԱՐՏՈՒՂԱՐ

.....

Եպիսկոպոսական աստիճանի հոգեւոր հովիւ մը ունենալու բախտաւորութեան արդիւնք, քարտուղարի մը գոյութիւնը ստիպողական նկատուեցաւ Սրբազան հօր թելադրանքով Մոնթրէալէն յատկապէս քաղաքս հրաւիրուած Ս. Էջմիածնայ:

Ճեմարանի նախկին սաներէն Վարդան Սրկ. երկու շաբաթէն ետ վերադարձաւ: Իր նախորդին պէս 400 տոլար ամսականով պաշտօնի կոչուած Պր. Աբրահամ Քանտահարեան, երկու ամիս վերջ պաշտօնէ հեռացաւ: 200 տոլար ամսականով պաշտօնի կոչեցինք Պր. Մատթ Բ. Մամուրեանը քարտուղարական եւ տպագրական գործերու Պատասխանատուութիւններով: Պրն. Մամուրեան իր աշխատութեամբ եւ հեզահամբոյր բնաւորութեամբ մեզ զոհացուց:

ԿԱՅԱՆԷ ՊԱՐԱՍՈՒՄԱ.

.....

Երջանէ մը իվեր գործունէութիւնները դադրած ԿԱՅԱՆԷ պարախումբը վերակազմեցինք: Պր. Տիգրան Թախտալեան 400 տոլար ամսականով, որպէս պարուսուց, եւ պր. Աբրահամ Քանտահարեանը 200 տոլար ամսականով, որպէս դաշնա - մուրով ընկերակցող, պաշտօնի կոչուեցան:

Պարր, նորահաս սերունդը - հոգ չէ թէ թիւով քիչ - ի ըարու մօտ բերելու, միասնաբար աշխատելու, ելոյթներով խանդավառութիւն ստեղծելու եւ պարագաներու բերմամբ մեզ օտարներու ծանօթացնելու լաւագոյն ձեւերէն մին է: Նիւթական օժանդակութեան համար դիմումներ կատարեցինք ԳԱՐԼԻՆԿ ԱՐԴ ԳԱՌՈՒՆՏԷ ՇՈՒ ԻՆ, ՌԻՆԻՍԹԱՐԻՕ ԻՆ եւ Գանատական դաշնակցային կառավարութեան ցարդ Գարլինկէն դրական պատասխան ստացանք 1000 տոլարի օգնութեան համար:

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ԱՍՍԱԹԵՐԹ.

.....

Աշխատակիցներու պակասի եւ մեքենական փոփոխութիւններու պատճառով երկար շրջանէ մը իվեր տպագրութիւնը կաղացող ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՆՈՐ ՈՅԲ բերելու համար անձնակազմի մէջ փոփոխութիւն ըրինք: Անցեալի մէջ իրենց աջակցութիւնը բերող բոլոր թորոնթոհայերու, նամանաւանդ իրենց զօհաբեր աշխատութեան համար Պրնք: Պետրոս Մուշեանի եւ Սարգիս Զիլինկիրեանի հրապարակային շնորհակալութիւն յայտնել պարտք կը նկատենք:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՌԱԶԱՅՆԻ ԳՐԲՈՅԿ.

.....

Ըստ ընկալեալ սովորութեան, հեռաձայնի գրքոյկը կը պատրաստուի եւ տպագրութեան կը տրուի երկու տարին անգամ մը: Պր. Միսաք Գոմետիսեան, գրքոյկը մօտ ապագայի մէջ տպագրութեան կարենալ յանձնելու համար, կարելի բծախնդրութեամբ աշխատութիւններ կը տանի: Պիտի թելադրենք որ թորոնթոհայութիւնը, յօգուտ իրենց պատրաստուող, այս գրքոյկին հետ աւելի մօտէն հետաքրքրուի եւ հասցէի, հեռաձայնի թիւի փոփոխութիւնները շուտով տեղեկացնէ:

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԴՈՒՌԵՐՈՒՆ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ.

.....

Ն կատի ունենալով թէ Եկեղեցւոյ դուռներուն բանալիները չափէն աւելի բազմացուած է եւ որոնց քով բանալի գտնուելը ճիշտ կարելի չէ, յարմար նկատեցինք դուռ երբ յատուկ կղպանքով օժտել որոնց բանալին կարելի չէ բազմացնել:

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ ԱԶԳ. ՎՐԺ. Ի ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ.

.....

Խնամակալութեան գործունէութեան համար նոր կանոնագիր մը պատրաստեցինք եւ նոր անդամներ նշանակեցինք: Անդամներուն ժրջան աշխատութեան շնորհիւ դպրոցի գաբոցի աշակերտութեան թիւը երկու հարիւրի հասաւ:

Շնորհակալութիւն խնամակալութեան անդամներուն եւ դպրոցի ուսուցչական կազմին իրենց ազգանուէր աշխատութեան համար:

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

.....

Մարտ 2 1975 Կիրակի օր Եկեղեցւոյ սրահին մէջ Պր. Եղուարդ Տէօվլէթեան բանախօսեց:

ԿԼԷՆ ԱԼԷՆԻ Ի ՊԱՏԻՒ ՀԱՒԱԲՈՅԹ.

.....

Ներգաղթի նախարարութեան Թորոնթոյի մասնաճիւղի գործակատար Պր. ԿԼԷՆ ԱԼԷՆԻ հանգստեան կոչման առթիւ Թորոնթոյի հայութեան կողմէ տրուած ողջերթի հաւաքոյթին, ուր իրեն հայաստան երթուղարձի տոմսակ մը տրուեցաւ, Եկեղեցւոյ անունով Արքայան Հօր հետ միասին ներկայ գտնուեցանք: Եկեղեցին ընդհ. ծախսերուն 1400 տոլարով մասնակցեցաւ:

ՉԱՐԻՆԱՅԻՆ ՊԱՐԱՀԱՆԴԻՄ

.....

Նախապէս Ապրիլ ամսուան մէջ կատարել ծրագրուած գարնանային պարահանդէսը նախամեծար նկատեցինք 10 Մայիսին. ընել, որ մեծ ընդունելութիւն գտաւ եւ յաջողութեամբ պսակուեցաւ:

ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱԳԱՆՑՈՒԹԻՒՆ.

.....

Այս տարուայ տարեկան դաշտագնացութիւնը տեղի ունեցաւ 22 Յունիս Կիրակի ամբողջ օր ԿՐԻՆՈՒՏ ԳՈՆՍԸՐՈՒԷՅՇՆ արիա՛ մէջ: Նպաստաւոր օդը եւ տեղի փոփոխութիւնը մեծապէս ազդեց ձեռնարկի յաջողութեան: Դաշտի վրայ բացօդեայ առաւօտեան ժամերգութիւն կատարուեցաւ:

ՇԱՐԺԱՆԿԱՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ.

.....

Յունիս 7 Շաբաթ Եօրը համալսարանի սրահին մէջ անգամ մը եւս ներկայացուեցաւ ԵՐՋԱՆԿՈՒԹԵԱՆ ԱՐՑՈՒՆՔՆԵՐ անուն գունաւոր հայերէն շարժանկարը: Մեծ ժողովուրդականութիւն գտած այս ժապաւէնի ցուցադրութիւնը հասութաբեր եղաւ:

Ս.ԽԱԶ ԴՊՐԵՎԱՆՔԻ ՕԺԱՆԴԱԿ ՍԱՐՄԻՆ.

.....

Ինչպէս նախանցեալ տարիներու, այս տարի եւս օժանդակ մարմինը կազմակերպեց շաբաթավերջ մը: 27 Սեպտեմբեր շաբաթ երեկոյ Մոնթրէալի Թէքէեան Մշակ. Միութեան թատերախումբը յաջող ներկայացու մ մը տուաւ: Սեպտ. 28 Կիրակի յաւարտ Ս. Պատարաքի մատաղի սեղան սարքուեցաւ: հաւաքուած սրտաբուխ նուիրատուութիւնները, Պատրիարքարանի հրամանին տրամադրելի ըլլալու համար, Առաջնորդարան փոխանցուեցան:

ՆԱՐՏԻ ԵՐԵԿՈՅ.

.....

Նոյեմբեր 22 Շաբաթ 1975 Կազմակերպեցինք նարտի. երեկոյ մը 34 մասնակցողներով: Անցեալ տարուայ ախոյեան Պր. Սահակ Եհմսէլ այս տարի յաղթական հանդիսանալով տիրացաւ ՍԵՂՐԱԿ ԱՏԵՐԵԱՆ բաժակին:

ԵԿԵՂԵՑՈՒՅՍ ՀԻՄՆԱՆՈՒԹԵԱՆ 25 ԱՄԵԱԿԸ.

.....

Եկեղեցւոյ Օձման 22րդ եւ հիմնարկութեան 25 ամեակին առթիւ սրահի մէջ ճաշկերոյթ մը սարքեցինք, պատուոյ սեղանին վրայ հիւրանկալելով Եկեղեցւոյ հիմնադիր անդամ եւ անդամուհիները: Նոյն օր յիշատակի նուէրներ տրուեցան ծխ. խորհուրդի շրջանաւարտ անդամներուն: Ներկաներու սրտաբուխ նուէրներով զոյացաւ 2500 տոլարի պատկանելի գումար մը: Օրուայ զեղարուեստական բաժնին մաս բերաւ նայել ԿԱՅԱՆԷ պարախումբը: Բանախօսեց Պր ժիրայր Բէտէրեան: Ըստ ընկալեալ սովորութեան, Տիկց. Միութիւնը ծխ. խորհուրդի փոխանցեց 7000 տոլար. այս գումարը Եկեղեցւոյ պատմութեան մէջ աննախնթաց է: Յատկապէս հրապարակային շնորհակալութիւն կը յայտնենք եւ կը շնորհաւորենք Տիկ. Միութեան վարչութիւնը եւ անդամուհիները:

Հանդիսութիւնէ աւելի վերջ Հ.Ե.Ս.Կ.Ա.ն ծխական խորհուրդի փոխանցեց 1000 տուար.

ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻ ՄԸ ԳՆԵԼ ԿԱՄ ՇԻՆՆԵԼ.
.....

1974 տարուայ Յունուարի Ընդհ. ժողովը փափաք յայտնած էր, որ ծխական խորհուրդները հետաքրքրուին նոր եկեղեցի մը շինելու կարելիութեամբ.

